ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՔՈՒԳԱՀԵՌՆԵՐՈՒՄ

Հասարակական, տնտեսական օրգանիզմի վերաբերյալ հարցերը՝ լինելով վիճահարույց, դժվար է ենթարկել վերջավորված պատասխանների: Տնտեսագետները առաջադրում են տեսակետներ ու փոխանակում կարծիքներ, որոնք միտում ունեն պարզելու տնտեսագիտության հասարակական կոչումն ու ուղղությունը, այն նոր պարադիգմը, որով պիտի տեղի ունենա նրա հետագա ընթացքը: Հազիվ թե տնտեսագիտության արդի ուղղություններից որևէ մեկին կարելի է իրավունք վերապահել կատարելու այդ ֆունկցիան: Եվ դա այն պատճառով, որ ինչպես նկատում է Ա. Պորոխովսկին, «ամբողջ աշխարհը երրորդ հազարամյակում հայտնվել է անցումային շրջանում: Բայց աշխարհի այդ անցումայնությունը, նախ իր մեջ թաքցնում է շատ անորոշություններ, երկրորդ՝ տնտեսագիտության տեսության առաջ դնում է միանգամայն նոր պրոբլեմներ», իսկ մյուս կողմից, «նոր ժամանակի մարտահրավերները տնտեսական կոորդինատների նոր համակարգում ոչ միշտ կարող են ստանալ հավասարազոր պատասխաններ»:[1] Այս իմաստով պարզունակ պիտի դիտել, երբ որոշ տնտեսագետներ, աշխարհի գլոբալացման փաստարկով տեսական տնտեսագիտության առաքելությունը տեսնում են ամբողջ մարդկության զարգացման պահանջներին համապատասխան մի հիմնավորված տնտեսական մոդելի և գործողության մեխանիզմի ստեղծումը:[2] Գլոբալացումը որոշակի ընդհանրություններ գծում է տարբեր երկրների ընդհանուր տնտեսական պահվածքում: Սակայն դա դեռևս չի նշանակում, թե ազգ հասկացությունը կարելի է փոխարինել մարդկության հասկացությամբ բոլորին դնելով մի ընդհանուր եվրոպական մոդելում: Հակասությունն արդեն առկա է հենց այդ սկզբունքի մեջ. որքան արևմուտքը իր արժեքները և շահերը ներկայացնում է որպես համամարդկային, այնքան «դժվարանում է դեպի համամարդկային հասկացության ճանապարհ հարթելը»[3]: Ավելի հավանական է ներկայանում, որ հասարակության առաջընթացը տեղի կունենա ոչ միօրինակ գծային, այլ քաղաքակրթության մի քանի կենտրոնների ձևավորման ուղղությամբ: Տեղի է ունենում մարդկության ինտելեկտուալ առումով առաջընթաց, տեղի է ունենում ազգերի փոխադարձ հարստացում, բայց ինչպես նկատում է Լ.Աբալկինը, իսկ արդյո՞ք տեղի չեն ունենում ավելի բարդ ու տագնապալից երևույթներ քաղաքակրթությունների զարգացման մեջ, նկատի ունենալով այն ճեղքվածքը, որ առաջանում է բարձրագույն գիտական նվաճումներին և կուլտուրայի գլուխգործոցների հետ հաղորդակցվող ինտելեկտուալ էլիտայի և եկամուտներն ու ծախսերը հաշվարկելու համար կրթական ծայրահեղ մակարդակով սահմանափակված ամբոխի միջև: Իսկ պատկերացումը այն մասին, որ մի քանի միլիարդ մարդիկ շարժվում են դեպի ետինդուստրիալ քաղաքակրթություն, արմունկներով միմյանց հրմշտելով, որպեսզի ավելի շուտ հասնեն այնտեղ, առաջ է բերում մեծ կասկածանքներ: Ճեղքվածքը, ինտելեկտուալ էլիտայի և ամբոխի միջև աճող խորը անդունդը ինձ ավելի հավանական և վտանգավոր սցենար է թվում:[4] Որքան ուտոպիական է հնչում այդպիսի «ետինդուստրիալ քաղաքակրթության» հնարավորությունը, նույնքան էլ այդ մոդելն ապահովող տեսությունը: Ինչ խոսք, գոյություն ունի շուկայի ընդհանուր տեսություն, բայց կան նաև շուկայական տնտեսության տարբեր մոդելներ: Մի ծայրահեղություն տեսության մեջ նկատվում է, թե հասարակական բոլոր հարաբերությունները ենթակա են շուկայի պարտադրող ուժին, որն այլ ասելիք չի ակնկալում, քան շուկայի ինքնաբավ մեկնաբանությունը: Իսկ դա տանում է դեպի տնտեսագիտության ոլորտների նեղացում, զուտ շուկայի դիտակետից ստեղծելով այն պատկերացումը թե ռացիոնալը կապված է շուկայական չափումների հետ՝ որպես երևույթների ճանաչողության բացարձակ ձևի: Մասաչուսետսի նահանգի Տաֆտսայի համալսարանի գլոբալ զարգացման և շրջակա միջավայրի ինստիտուտի տնօրեն Ն.Գուդվինը, քննադատելով ամերիկյան ստանդարտացված «էկոնոմիքսի» դասագրքերը, որոնք արմատական ռեֆորմատորների համար տեսական ոգեշնչման աղբյուր էին հանդիսանում Ռուսաստանում, նկատում է, թե. «Դասագրքերի հեղինակների ուշադրությունը գրեթե բացառապես կենտրոնացված է շուկաների վրա, մինչդեռ տնտեսական գործունեությունը էական չափով, որոշ գնահատումներով մինչև 30 տոկոս, բովանդակված է տնային տնտեսությունների շրջանակներում: Իսկ գլխավորը՝ նրանք բոլորովին չեն մտածում այն մասին, թե ամբողջ գործարար ակտիվության որքան նշանակալից մասը չի անցնում շուկայի միջոցով: Խոսքն, ամենից առաջ, վերաբերում է խոշոր, հատկապես տրանսազգային ֆիրմաների ներսի ռեսուրսային հոսքերին: Տնտեսագիտության գծով նոբելյան մրցանակի դափնեկիր Գ. Սայմոնը առաջարկել է այսպիսի մտային փորձ. պատկերացնենք հատուկ սարքավորման միջոցով ստացված երկրագնդի նկարը զննող այլմոլորակայինի: Այնտեղ ոչ շուկայական հիմքի վրա կազմակերպված սոցիալական կառուցվածքները առանձնացված են կանաչ ծածկույթով, իսկ շուկայական փոխանակությունը՝ այդ ծածկույթները իրար միացնող գծերով: Նկարում, Սայմոնի կարծիքով, կգերակշռեին կանաչ մասերը, որոնք փաստորեն

---

[1] Российский экономический журнал, 2003, N3, с.71
[2] Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, 2005, N1, էջ 105
[3] История философии, М., 1999, с.113
[4] Леонид Абалкин, Отложенные перемены или потерянный год, М., 1997, с.11

անտեսված են ավանդական տնտեսագիտական վերլուծության մեջ: Խոսք չկա, ռուսական ուսանողությանը անհրաժեշտ են շուկաները վերլուծող դասագրքեր, բայց նրանք նաև պետք է իմանան, թե շուկաները ինչպես են հարաբերակցվում տնտեսական գործունեության ոչ շուկայական ոլորտների հետ»:[1]

Ակներև է, որ երևույթների զուտ շուկայական դիտակետից ընդունված իմաստները համարվում են սահմանափակ, թե անհրաժեշտ է բավարարվել ոչ միայն դրանց միանշանակ իմացությամբ, փորձելով դրանց էությունը տեսնել նաև այլ կապերի մեջ, քանի որ «շուկայական վեկտորը ավելի շատ սկսում է ձևավորվել, ըստ էության, ոչ շուկայական կոորդինատների շրջանակներում»: Դա նշանակում է, որ տնտեսության իմացաբանական ժամանակակից չափանիշները պարտադրում են ընկալումների ավելի լայն շառավիղներ: Հենց այս իմաստով տնտեսագետները նորից ու նորից անդրադառնում են պետության և շուկայի հարաբերակցության հարցին: Խնդիրը չի կարելի հանգեցնել այդ կապի հասարակացված մեկնաբանությանը, այլև այն, որ դրանց հակադրության մեջ արտացոլվում է տնտեսական որոշակի մտածողության այն դրույթը, թե տնտեսության մեջ որքան քիչ է պետության մասնակցությունը, այնքան լավ է: Ինչը բնորոշ էր 90 - ական թվականների ռեֆորմատորներին: Մինչդեռ, իրականում «Պետությունը իր տնտեսական գործունեության բնույթով դառնում է միաժամանակ և՛ շուկայական կառուցվածքի տարր, և՛ հասարակական զարգացման կայունացման գործոն ընդհանրապես, քանի որ իր վրա է վերցնում բոլոր այն ֆունկցիաները, որոնք հասու չեն շուկային...: Հետևապես, կարևոր է գտնել այն օպտիմումը, որը սահմանափակում է պետության տնտեսական գործունեությունը որոշակի շրջանակներով, որոնք նրան թույլ են տալիս արդյունավետ ձևով նպաստել՝ բացահայտելու շուկայական համակարգի բոլոր առավելությունները իր երկրի զարգացման տարբեր էտապներում: Հասկանալի է, որ այդպիսի օպտիմումը տարբեր է՝ կախված տեղի և ժամանակի, պատմական և ուրիշ հանգամանքներից»:[2]

Լ. Տոլստոյը նկատել է՝ թե մարդիկ ուրիշների մասին կարող են խոսել հաճույքով, բայց ախորժակով խոսում են միայն իրենց մասին: Հանրապետության նախորդ տասնամյակի ղեկավար այրերից մեկը նկատում է, թե «90-ականների սկզբներին մենք ունեցել ենք ամենամտավորական ղեկավարին, ամենամտավորական գերագույն խորհրդի նախագահին և ամենամտավորական կառավարությունը: Չեմ էլ կարծում, թե առաջիկա 50 տարիներին սա կարող է կրկնվել: Այո, մենք պարզապես այն ժամանակ ավելի շատ գիտեինք, քան ցանկացած մեկ ուրիշը: Մեր հիմնական լուծումների ճշմարտացիության մեջ մենք ավելի շատ էինք համոզված, քան թե դրանց սխալ լինելու հավանականությունն էր: Մենք գիտեինք՝ ինչ գիտենք և գիտենք՝ ինչ չգիտենք»:[3] Ոչ ավել, ոչ պակաս: Ընդհանրապես, միագիծ ու անվերապահ պահվածքը արդեն իսկ ենթակա է կասկածանքի, հատկապես պատմության գնահատման առումով, որն ինքնին ենթադրում է հետադարձ հայացքի անհրաժեշտությունը: Ռեֆորմներ իրականացնողները, սովորաբար, ժամանակ անց խոսում են նաև իրենց վրիպումների մասին, մանավանդ, եթե այդ ռեֆորմները իրականացվում են հասարակական մեծ ծախքերի գնով: Եթե «ամենամտավորական» ղեկավարները այդպես չեն վարվում, դա նրանց թուլությունն է, իսկ երևակայական բացառիկությունը պարզապես ցնորք:

Եթե անհիմն չէ այն պնդումը, թե շուկաները արդյունավետ են գործում որոշակի սահմանափակ և առանձնահատուկ պայմանների դեպքում, բայց իրողություն է նաև սոցիալական ներհակություններ ծնելու նրա հատկությունը: Հետևապես խնդիրը հանգում է «երրորդ ուղու» ընտրությանը՝ որոշակի ձևի և կարգավորման մակարդակի մեջ: Այստեղ է, որ ռեֆորմների իրականացման ժամանակ, հատկապես կապված մասնավորեցման հետ, հարկ էր մեկնակետ ունենալ ոչ թե պետական սեփականության առավելությունների ու թերությունների խնդիրը, այլ, հատկապես «անցումային» տնտեսությունների համար երկրի առջև ծառացած առաջնությունները: Մինչդեռ կամ կամի փիլիսոփայությունն ինքնին թույլ խորհրդատու է առանց կորուստների վերափոխությունների համար: Ճիշտ է ասված, թե «ամեն մի ծայրահեղություն սահմանափակություն է»: Ամբողջ խնդիրը ռեֆորմների իրականացման ժամանակ, որպես նորի յուրացում, իր հիմքում պետք է ունենա ներքին հնարավորությունների հաշվառման հանգամանքը:

Պետության և շուկայական համակարգի տնտեսության մեջ կատարած դերի հարցերում տնտեսագիտական միտքը կատարում է վերանայումներ: Անցյալ 90-ական թվականները ԱՄՆ-ի տնտեսության համար վերելքի տասնամյակ էր. տնտեսական աճի բարձր տեմպեր, նոր տեխնոլոգիաների արագ զարգացում, գործազրկության ցածր մակարդակ: Իսկ դարասկիզբը բնորոշվեց տնտեսական անկումներով, առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի աճով և համաշխարհային շուկայում դոլարի դիրքերի թուլացումով: «Շուկայական մեխանիզմի մաքսիմում ազատության» հրաշագործ ուժի մասին լիբերալ պատկերացումներն սկսեցին վերանայվել, մանավանդ, որ Ամերիկային ընդօրինակելու խորհուրդները շուկայական տնտեսությանն անցնող երկրների համար չհանգեցրեց սպասվող արագ դրական տեղաշարժերի: Նոբելյան մրցանակի դափնեկիր Ստիգլիցը, 90-ական թվականների տնտեսական պատմության հետագծի վերլուծության արդյունքում ձևակերպում է երրորդ ուղու իր հայեցությունը. «Այդ պատկերացումը ինչ-որ տեղ ընկած է նրանց միջև՝ ովքեր տնտեսության մեջ պետությանը հատկացնում են գերիշխող դեր և ովքեր կանգնած են նրա նվազագույն դերի տեսակետին, միաժամանակ նրանց միջև՝ ովքեր կապիտալիզմը համարում են ամբողջությամբ փտած համակարգ և նրանց՝ ում շուկայական համակարգը ներկայանում է որպես բոլորի համար չտեսնված բարգավաճում ապահովող անթերի և հրաշալի հայտնագործություն: Ես շուկայական մեխանիզմը դիտում եմ որպես բարիքների ստեղծման հզոր գործիք, որը դեռևս չի հասել իր հնարավորությունների բարձրակետին, բայց իր զարգացման պրոցեսում մարդկության մի մասին մատնել է ետ մնալու և, փաստորեն նույնիսկ նրա որոշ մասի վիճակը վատացրել:

---

[1] Российский экономический журнал, 2003, N 3, с.72.
[2] Նույն տեղում, էջ 73:
[3] Էկոնոմիկա, 2006, N2, էջ 10:

Այդ պատկերացումը ենթադրում է պետության հավասարակշռված դերի և բոլոր՝ ինչպես գլոբալ, այնպես էլ լոկալ մակարդակներում, սոցիալական արդարության ապահովման փորձ և միաժամանակ առաջադրում է անհատական և ազգային պատասխանատվության զգացում, անհատական նախաձեռնության համար հնարավորությունների ընդլայնում և միաժամանակ տուրք է տալիս կոլեկտիվ դեմոկրատական գործողությունների անխուսափելիությանը:[1]

Հայ տնտեսագետները անդրադարձել են խնդրին: Սակայն ոչ միայն պետության դերի մասնավորեցմանը որևէ կոնկրետ ոլորտի առումով, ինչպես հաճախ կարելի է հանդիպել ուսումնասիրություններում, այլ մի ավելի լայն խնդրի՝ տնտեսական ենթատեքստում պետության հասարակական ֆենոմենի բացատրությանը, որը և՛ հասարակական ընտրության ֆենոմենն է, և՛ պետության որակի, և՛ նրա օպտիմալ չափերի սահմանների գնահատումները, և՛ տնտեսության ազգային մոդելի ընտրությունը և այլն: Այս ոչ դյուրին և հակասական խնդրին է նվիրված Հովսեփ Աղաջանյանի «Պետությունը և տնտեսությունը» աշխատությունը: Նախ, կարևոր եմ գտնում անդրադառնալ աշխատության առանձնահատկություններին: Հաճախ տեսական տնտեսագիտության ուսումնասիրություններում վերլուծությունները կատարվում են որոշակի սկզբունքով, որը ենթադրում է շարժում տեսությունից դեպի կոնկրետը, երբ վերջում արդեն տեսությունը ոչ թե կոնկրետանում է, այլ շարադրանքը լցվում քիչ բան ասող փաստերով: Հ. Աղաջանյանի ուսումնասիրության մեջ շարժումն ընթանում է տեսությունից դեպի տեսություն, ընդ որում՝ դեպի կոնկրետին շարժումը նորից կատարվում է դեպի տեսություն սխեմայով, ինչը նրա կարևոր արժանիքներից է:

Շեշտի կարիք ունի մեկ այլ հանգամանք ևս. այն, որ տնտեսական հարցերի մեկնությունը կատարվում է լայն հայացքով, ոչ միայն առաջնորդվելով զուտ տնտեսագիտական կատեգորիաներով, այլև երևույթներն առնչելով սոցիալական մյուս գիտությունների տիրույթներին, ինչը, դժբախտաբար բնորոշ է հայ տնտեսագիտական մտքի քիչ աշխատությունների: Մինչդեռ տնտեսական երևույթների վերլուծական այլատար սկզբունքների չափանիշների մեթոդը հնարավորություն է տալիս հայտաբերելու նոր շերտեր, հետևապես նաև նոր իմաստավորումներ: Այստեղ է, որ պատմության փաստը, քաղաքական փաստը, գրականությունը դառնում են տնտեսական երևույթը պարզաբանող գործոններ:

Երևույթների մեկնակետը հեղինակի մոտ հոգևոր ազդակների գործոնն է: Այդպիսին է նաև պետության ֆենոմենը՝ որպես հոգևոր դրսևորման և հավաքական կամքի արտահայտություն: Այս առումով նա վկայակոչումներ է կատարում ամենատարբեր հեղինակներից, գտնելով, որ նրանք պետությունը, որպես քաղաքակրթական որոշակի մակարդակի տրվածք, շփոթում են նրա դրսևորման ձևերի հետ, իբր մի կազմակերպություն, որտեղ «բոլոր մարդկանց բոլոր գործերի խնամատարությունը մի քանի մարդկանց ձեռքն է հանձնվում (Կրոպոտկին), կամ «պետությունը մեքենա է մի դասակարգի կողմից մյուսին ճնշելու համար» (մարքսիստական ընկալմամբ), կամ այն ֆենոմեն է, «որի վրա ժողովուրդների իսկական ազատությունն ու բարօրությունը զոհաբերվում է քաղաքական մեծությանը» և այլն: Ինձ թվում է՝ հարցի մեկնության մեջ առկա է որոշ անհարթություն, մանավանդ, ինչպես նկատում է հեղինակը. «մարդու վարքագծի ենթագիտակցական ազդակներն իրենց էությունը և բնույթը չեն փոխում», իսկ դա նշանակում է՝ պատմության հոգևոր զարգացման տարբեր աստիճաններում պետության դրսևորման որոշակի ձևերը դառնում են նույնքան բնական, որքան և անտիկ փիլիսոփաների առկա սոցիալական կարգը հաստատող արդարության և բարեկամության սկզբունքները:

Գուցե և ծայրահեղորեն են ըմբռնված որոշ առաջադրույթներ, ինչպես օրինակ, Հեգելի «պետության ծագումը ինքնին պետության գաղափարի հետ ոչ մի առնչություն չունի» կամ Պլատոնի պետության հիմնական սկզբունքն արդարությունն է: Եթե վերջինիս իդեալական պետության մեջ մասնավոր սեփականության հակումները հասցված են մինիմումի, իսկ երեխաները չգիտեն, թե ովքեր են իրենց իսկական հայրերը, ապա իր էթիկական սկզբունքներով այն կարող է տեղադրվել վերը նշված դրսևորման ձևերի մեջ: Սակայն, ինչ խոսք, որոնումը տեսության ուղեկիցն է:

Տնտեսագիտական մտքի անցումային փուլերը, սկսած Սմիթից մինչև Քեյնսը, ուրվագծում է այն, որ ընդլայնվել է տնտեսության կարգավորումների վերաբերյալ պատկերացումների քառակուսին, որոնք չեն սահմանափակվել միայն զուտ տնտեսական գործոնների վերլուծություններով և, որ գիտական միտքն իր էվոլյուցիայի մեջ երևույթները ենթարկել է բազմակի կախվածությունների տիրույթին և մասնավորապես, հոգևոր կյանքի ազդեցությունը տնտեսության վրա:

Քեյնսին համարելով տնտեսության պետական կարգավորման տեսության հիմնադիրը՝ Հ. Աղաջանյանը փորձում է նրա հայացքներում հայտաբերել նոր շերտեր՝ կապված, անգլիացի տնտեսագետի խոսքերով՝ «չափման միավորի ընտրության», տնտեսական վերլուծությունների ժամանակ «ենթադրությունների» խաղացած դերի և «եկամտի սահմանման» դժվարությունների հետ: Հայտնի է, որ հետքեյնսյան տնտեսագիտությունը փորձեց հստակեցնել Քեյնսի տեսությունը՝ վերջինիս տալով որոշակի մոդելի, այսպես ասած՝ բանաձևային արտահայտման ձև, բայց դա, ինչպես նկատում է տնտեսագետը, պարզապես մեկ անգամ ևս ցույց տվեց «տնտեսական համակարգի վարքագիծը պայմանավորող պարամետրերի ներքին հակասականությունը, որը հնարավորություն չի տալիս ճշգրտորեն ներկայացնել դրանց միջև առկա ֆունկցիոնալ կախվածության բնույթը», որ շուկայական մոդելի «արդյունավետությունը մեծացնելու նպատակով անհրաժեշտ է օգտագործել» բազմաթիվ լծակներ, ինչը տնտեսական համակարգի կարգավորումը դարձնում է անխուսափելի: Եվ հեղինակն անցնում է տնտեսության պետական կարգավորման տեսական հիմքերի քննությանը, որը բաղկացած է հետևյալ հարցախմբերից՝ հասարակական ընտրությունը և տնտեսության պետական կարգավորումը, տնտեսական և քաղաքական համակարգերի փոխհարաբերությունը, ինստիտուցիոնալ կերպափոխումները և տնտեսության պետական կարգավորումը: Հասարակության օպտիմալ կառավարման մեխանիզմների համատեքստում դիտարկվում են սոցիալիս-

[1] Дж. Стиглиц, Ревущие девяностые, М., 2005, с. 334.

տական գաղափարախոսությունների արմատավորման, ազատության ըմբռնման, լիբերալ շուկայական մոդելի «ձախողման» տեսության առնչությունները:

Ինչպես հայտնի է, մաթեմատիկայում բազմությունների տեսության հայտնագործումից հետո, նրանում սկսեցին արձանագրվել որոշ տրամաբանական հակասություններ, որոնց սովորաբար անվանում են պարադոքսներ, ինչպես օրինակ Բուրալիի-Ֆորտիի պարադոքսը, Ռասելի պարադոքսը, Ռիշարի պարադոքսը և այլն: Բազմությունների տեսության պարադոքսների պատկերավոր արտահայտության համար գրականության մեջ բերվում է անտիկ ժամանակներից հայտնի այսպիսի մի պարադոքս. ճանապարհորդը ընկնում է մարդակերների մեջ: Վերջիններս նրան հնարավորություն են տալիս արտահայտել մի միտք՝ պայմանով, եթե ճիշտ լինի նրան կխեղդեն, եթե կեղծ լինի՝ նրան կկախեն: Ճանապարհորդը ելքը գտնում է, ասելով, որ ինքը եկել է կախվելու: Եթե նրան կախեն, կստացվի, որ նրա ասածը ճշմարիտ է, բայց այս դեպքում նրան պետք է խեղդեն: Իսկ եթե խեղդեն, ապա նրա միտքը կստացվի կեղծ, ուստի նրան պետք է կախել:[1] Հազիվ թե գտնվի գիտության մի որևէ բնագավառ, որտեղ պարադոքսներ չլինեն: Նույնը վերաբերում է նաև տնտեսագիտությանը: Միայն մի մասնակի օրինակ. խնայողության պարադոքսը, ըստ որի ավելի շատ տնտեսելու հասարակության ձգտումը հանգեցնում է խնայողությունների նույնպիսի կամ նույնիսկ ավելի փոքր ծավալի: Այն հնարավորություն է տալիս հասկանալու խնայողության և սպառման առավելությունների վերաբերյալ տնտեսագետների հին վեճը, որոնց մի մասի կարծիքով խնայողությունն անհատներին, հետևապես նաև հասարակությանն ամբողջությամբ, կարող է ապահովել բարձր կենսամակարդակ ապագայում, մյուսները, թե սպառումը ենթադրում է ծախս՝ այսինքն՝ նաև աշխատանք ուրիշների համար: Այս վեճը սովորաբար ծագում է տնտեսական անկման փուլերում, երբ ամբողջական պահանջարկը կրճատվում է, դրանով իսկ կրճատելով արտադրության և զբաղվածության մակարդակները: Հետևապես այն, ինչ առանձին մարդկանց համար խնայողության արժանիքն է, հասարակության համար կարող է դառնալ չարիք:

Տնտեսագիտության դպրոցների հաջորդափոխության պատմությունը ոչ այլ ինչ է, քան նախորդ դպրոցների առաջադրված որոշակի դրույթների հակասական դրսևորումների լուծումների առաջադրման պատմություն: Այս իմաստով պարադոքսները բնավ չեն նշանակում նախորդից հրաժարում, այլ պարզապես տնտեսագիտության զարգացման հետ՝ երևույթների մեջ հայտնաբերվում են նոր շերտեր և նոր բացատրություններ, լուծման նոր որոնումներ: Իսկ դա ոչ այլ ինչ է, քան մեթոդների հաջորդափոխություն: Հ. Աղաջանյանը հասարակական ընտրության տեսությունը դիտում է որպես լայն հասկացություն, որը ենթադրում է որոշակի պարադոքսների առկայությունը, պարադոքսներ, որոնք իրենց ազդեցությունն ունեն տնտեսության վրա, ինչպես օրինակ՝ հոգեբանական գործոնը, որն իր հիմքում ունենալով հոգևոր պահանջմունքի փոփոխությունը, պատճառ է դառնում պատմության հակասական դրսևորումների՝ որտեղից են սկսվում և որտեղ են վերջանում ազատության սահմանները, ինչու բռնապետություն և ոչ ժողովրդավարություն, կամ «ճշմարտությունը ձայների մեծամասնությամբ չի որոշվում» և «ժողովրդավարությունը անկատարություն է, բայց մարդկությունն ավելի լավ համակարգ չի կարողացել ստեղծել» ճշմարտությունների լուծում չունեցող հակասականությունը, կամ արդարության և հավասարության սահմանների չափորոշիչների պարադոքսը և այլն: Բարդ ու խճճված արժեչափերի այդպիսի պայմաններում հասարակարգի ինքնակարգավորման հիմնական միջոցը կապվում է օրենքների համակարգի հետ, որպես՝ «հասարակական կապիտալ»:

Պետության դերի բացահայտումը կապված է հակասականությունների, եթե ոչ վերջնական, ապա գոնե որոշակի մակարդակով պարզաբանումների հետ: Իսկ ինչ փոխհարաբերության են ենթակա տնտեսական և քաղաքական համակարգերը, որոնք իրենց միասնության մեջ, ըստ էության, հակակշիռներ են՝ պայմանավորված սեփականության հաստատության, ընդունելի սոցիալական շերտավորման, հակամենաշնորհային միջոցառումների, քաղաքական համակարգում սոցիալական տարբեր խմբերի ապահովման, իրավական համակարգի կայացման հետ: Այստեղ արդեն անհրաժեշտ են որոշակի «խաղի կանոններ», ինստիտուցիոնալ կարգավորում, որպես «ռացիոնալ ընտրության» իրացում: Հ. Աղաջանյանն անդրադառնում է պետության տնտեսական գործառույթների արդյունավետության հիմնախնդիրներին, ցույց տալով, թե ինչպես սոցիալ-տնտեսական համակարգի աստիճանական բարդացման հետ աճում է պետության դերը՝ կապված աշխատանքի բաժանման և բնական ընտրության հետ: «Բարիքների և ծառայությունների շուկա» հասկացությունն արդեն ենթադրում է նաև քաղաքական, ընտրական, իրավական և այլ «բարիքների» ամբողջությունը: Ի՞նչ արժեքային չափանիշներով առաջնորդվել: Հետևապես, արժեքի նախկին սահմանումները ենթակա են ճշգրտման, քանի որ տեղեկատվությունը հոգևոր – ինտելեկտուալ իր բովանդակությամբ՝ դարձել է արտադրության գործոն, բերում է տեղեկատվական եկամուտ, ինչպես մյուս գործոնները:

Հարկ է նկատել, որ «Պետությունը և տնտեսությունը» աշխատությունը բնորոշվում է մտահայեցական վերլուծությամբ: Դա վերլուծության որոշակի մեթոդ է, որը հատկապես բնորոշ է նեոլիբերալիզմի ուղղությանը: Ընդունված է, որ տնտեսական գիտությունն, ի վերջո, գործ ունի քանակական որոշակիությունների հետ, իսկ մտահայաց մեկնություններում, առանձին դեպքերում, անտեսվում են, այսպես ասած «օբյեկտիվ» կատեգորիաները (օրինակ՝ արժեք, արտադրության ծախքեր և այլն): Օրինակ՝ Հայեկը գտնում էր, թե փողի էմիսիայի պետության մոնոպոլիան պետք է փոխարինվի մասնավոր սուբյեկտների թողարկման իրավունքով, թե տեսականորեն փողն ինչպես կարող է ազդել տնտեսական գործունեության կոորդինացման պրոցեսի վրա ընդհանրապես: Դա վերլուծական մեթոդ է, ուր փաստորեն բացակայում է փողը: Այսինքն մեթոդ, որտեղ կատեգորիաները գործում են տեսության մեջ: Գիտության մեջ ամեն ինչ չէ, որ անհրաժեշտ է չափել կամ կշռել:

[1] Ս. Հ. Ավետիսյան, Մաթեմատիկան և իրականությունը, Ե., 1966, էջ 178:

Հեղինակը մեկ անգամ ևս շեշտում է այն, որ «ստեղծվել է պետություն առանց գիտության», այսինքն՝ անցմանը չի նախորդել տեսական նախապատրաստության շրջանը, այդ պատճառով էլ ամեն ինչ մատնվել էր տարերայնության հոսքին:

Աշխատության գնահատման առումով՝ այն արդի հայ տեսական տնտեսագիտության նվաճումներից է, որն իր բնույթով իրացնում է գիտական նպատակը, որոշակի մեթոդոլոգիական սկզբունքներով «պետությունը և տնտեսությունը» հիմնախնդրին մեկնություն տալով տեսության մակարդակով, «որտեղ պատճառի և հետևանքի անջատման սահմանը»:

* * *

Ինչ խոսք, մեծացել է հասարակության հետաքրքրությունը տնտեսագիտության նկատմամբ: Կարծես թե հասարակությունը նոր է սկսել գիտակցել, որ ցանկացած գործունեություն ենթադրում է որոշակի լուծումներ, իսկ դա անպայման շփման եզրեր է որոնում տնտեսագիտության հետ:

Հաճախ ասում են, թե այն ինչ վերաբերում է բոլորին, որոշակիորեն ոչ ոքի չի վերաբերում: Այս իմաստով չի կարելի ենթադրել, թե տնտեսագիտության տեսությունը կարող է պատրաստի պատասխաններ տալ յուրաքանչյուր տվյալ տնտեսական կացության համար, բայց որ այն անհրաժեշտ է տնտեսական գործունեության համար որոշակի տնտեսական պահվածքի և կողմնորոշումների ու արդյունավետ տնտեսական որոշումների համար, այդպես է: Ահա թե ինչու տնտեսագետները մի անգամ չէ, որ շեշտում են տնտեսական փոխաձնության արդի փուլում նոր տնտեսական մտածողության անհրաժեշտությունը և ձևավորումը: Նկատենք, որ այդպես էր նաև XIX դարի վերջին քառորդին, երբ՝ կապված կապիտալիստական հարաբերությունների ձևավորման հետ, հայ միտքը մեծ կարևորություն էր հատկացնում տնտեսական գիտությանը ու փորձելով յուրացնել արևմտյան տնտեսական ուսմունքները, տնտեսական կրթությունը համարում ազգային վերածնության սկզբունքներից մեկը:

Տնտեսական կենցաղը և տնտեսական մտածողությունը ֆունկցիոնալ կապի մեջ են, որպես մի ընդհանուր պատմության երկու կողմեր: Տնտեսության նոր ձևերի մուտքը մեզ մոտ շատ ավելի արագ կատարվեց, քան այդ ձևերի տնտեսական գիտակցումը: Ուստի տնտեսական նոր մտածողության ձևավորման գործում հասարակական գիտակցությունը, ինչպես նկատում է Գ. Կիրակոսյանը, «պետք է որոշակի պատկերացում ունենա այն մասին, որ ամեն մի նոր տնտեսաձևի, այդ թվում՝ շուկայականի սկզբնավորումն ու կայացումը, պահանջում են ժամանակ և տարածություն, որտեղ տվյալ տնտեսաձևի առավելությունները տեսանելի են դառնում և գործնականում վերածվում համոզմունքի՝ հասարակության առնվազն հիմնական մասի համար»:[1] Իսկ իրենց հետևանքների մեջ չգիտակցված տնտեսական ռեֆորմները կարող են երկարացնել սպասվող առավելությունների տեսանելիության ժամկետները:

Տնտեսական մտածողությունը հասարակական ընդհանուր գիտակցության մի բաղկացուցիչն է և իր մեջ կրում է «ազգային մենտալիտետի» առանձնահատկությունները, այսինքն տնտեսական երևույթների նկատմամբ այնպիսի մոտեցումները, որոնք բացահայտում են ազգի հիմնական տնտեսական շահերը: «Այս իմաստով,– նկատում է Յու. Օլսևիչը,– ազգային մտածողությունը հակադրվում է ռուսական պատմական «մենտալիտետի» այնպիսի գծերին, ինչպիսին է հակվածությունը պրիմիտիվ բնույթի «գուցեն» որոշումներին, օրինական սեփականության և ընդհանրապես օրենքները չհարգելը, համակրանքը բոլոր տեսակի արմատականությունների և հակակրանքը փոխզիջումների նկատմամբ, հակվածությունը որոշ առաջնությունների և գնահատականները կտրուկ հակառակով փոխելու, պասիվ վիճակից խռովության անցնելու և հակառակը և այլն»:[2] Որքան այս և այլ հարցերը հեղինակը կարևոր է դիտում ռուսական իրականության համար, նույնքան դրանք անհրաժեշտ են հայ հասարակական մտածողության համար: Առանց հայ ազգային պահվածքի այդ շերտերի բացահայտման, տնտեսության ազգային մոդելը լիարժեք չի կարող գործել, ավելի ստույգ, հնարավոր չէ ազգային շահերի տեսական «մոդելավորումը»:

Հայտնի է, որ Ի. Շումպետերի համար գիտության, այդ թվում տնտեսական գիտության պատմության ուսումնասիրությունն առանձնահատուկ նշանակություն ունի: Ինչպիսի խորությամբ, նորությամբ կամ բարձր ոճով էլ շարադրված լինի տվյալ ուսումնասիրությունը, առանց պատմական ակնարկի մեծ մասամբ հնարավոր չէ հասկանալ «գիտության զարգացման ուղղությունը»:[3] Այս իմաստով, արդի տնտեսագիտության տեսությունը միշտ գտնվում է պատմության սահմանում: Ա. Արասխանյանը նկատում է, թե որքան ազգը հեռանում է նահապետական վիճակից, այնքան ընդլայնվում են նրա պահանջմունքները: Պահանջմունքը դառնում է ոչ միայն առաջադիմության պատճառ, այլ նաև նրա հետևանքը: Սակայն դա պահանջմունքների լոկ քանակական աճ չէ, այլ նաև մի պրոցես, որը ենթադրում է այդ աճը ապահովող ձեռնարկությունների ձևերի ու կազմակերպական մեթոդների կատարելագործման մի բարդ ընթացք, ուր ձուլված են տնտեսական ու հոգևոր ազդակները, որոնք հաճախ դարերի ընթացքում դաստիարակում ու ձևավորում են ազգային պահվածքի որոշակի սկզբունքներ: Այս հանգամանքի անտեսումը, Ա. Արասխանյանի կարծիքով, չի կարող բացասաբար չանդրադառնալ տնտեսական երևույթների ճանաչողական արժեքին: Հետևապես տնտեսական երևույթների տարածական կամ քանակական ցուցանիշների մասին կարելի է պատկերացում կազմել միայն բազմաթիվ գործոնների փոխներգործության մեջ ու, թերևս տնտեսագիտությունը դրանով է առանձնանում բնական գիտություններից. «Տեսեք, թե գոեթիկ ժողովրդի համար ինչ է ջուրը, մինչդեռ նրա համար ջուրը մի հասարակ մարմին է, քիմիկոսի համար նա ջրածնի ու թթվածնի տարրերից բաղկացած մարմին է: Տնտեսական երևույթները նմանապես

---

[1] Գրիգոր Կիրակոսյան, Անցումային տնտեսության վերափոխումները, Ե., 2002, էջ 38:

[2] Ольсевич Ю. Я., К теории экономической трансформации (сборник статей), М., 1997, с.8

[3] Шумпетер И., Теория экономического анализа, Տես՝ Истоки. Вопросы истории народного хозяйства и экономической мысли, выпуск 1, М., 1989, с.249.

կազմված են զանազան տարրերից, զանազանությունը միայն նրանում է, որ այս տեսական հարցերը դժվար լուծելի են, քան քիմիական մարմինները, այդ նրանից է, որ քաղաքատնտեսական, որպես և հասարակական հարցերը, բաղկացած են ավելի շատ տարրերից, քան առաջինները: Իսկ մյուս կողմից այդ տարրերը, որոնք պատկանում են մարդուս հոգեկան, մտավոր և հասարակության պատմական և ավանդական դրությանը, այդ տարրերը, ասում ենք, չի կարելի ոչ մաթեմատիկական ճշգրտությամբ որոշել, ոչ էլ նույն ճշգրտությամբ չափել կամ կշռել»:[1] Միանգամայն ակներև է պատմական դպրոցի ոգին, ըստ որի նեղ են տնտեսական երևույթների վերլուծության դասական դպրոցի լոկ պահանջարկի ու առաջարկի կամ մաթեմատիկական դպրոցի տնտեսական կյանքը ամբողջովին քանակական չափումների ենթարկելու սկզբունքները: Հանգուցային նշանակություն է ստանում վերլուծական այնպիսի ընդգրկումների անհրաժեշտությունը, որոնք կապված են ինստիտուցիոնալ, էթիկական և կուլտուրական գործոնների հետ: «Այն ընդհանուրը, ինչը միավորում է ժողովրդի կամ պետության առանձին տնտեսությունները,– գրում է Գ. Շմոլերը,– ոչ թե պարզապես պետություն է, այլ ավելի խորը ինչ-որ բան. լեզվի, պատմության, հիշողությունների, սովորությունների, գաղափարների ընդհանրություն: Այդ ընդհանուր էթնոսը, ինչպես հույները կոչում էին սովորության և իրավունքի մեջ բյուրեղացած բարոյական – հոգևոր ընդհանուր գիտակցությունը, ազդեցություն է ունենում մարդու բոլոր արարքների վրա, հետևապես նաև նրա տնտեսական գործունեության վրա»:[2]

Այս իմաստով էլ, Արասխանյանի կարծիքով արդիականության հարցերի մեկնաբանության ժամանակ հարկ է կիրառել պատմական մեթոդը բոլոր այն գիտությունների համար, որոնք վերաբերում են «հասարակական մարդուն. հասարակական, այսինքն մարդ, որպես հասարակության անդամ և ոչ իբրև միակ անձնավորություն, այլ խոսքով, ոչ ֆիզիկական անձ, որը նյութ է տալիս ֆիզիոլոգին, անատոմին, այլ բարոյական կամ հասարակական անձ, որը նյութ է տալիս ընկերաբանության, կենսաբանության (sociologic, biologic) իրավագիտության, քաղաքատնտեսության և քաղաքագիտության»:[3] Տնտեսագետի դիտողությունները նպատակ ունեն բացատրել տնտեսական հաստատությունների լինելիության հարյուրամյակներ տևած այդ ամբողջ գործընթացի և տնտեսական մտածողության դժվարություններն ու առանձնահատկությունները:

Հարցի դրվածքը առիթ է տալիս արդի ազգային տնտեսության վերաբերյալ մտորումների՝ կապված, ինչպես հաճախ անվանում են, տնտեսական և ոչ տնտեսական գործոնների նշանակության հետ: Անցումը նոր տնտեսաձևին իր հետ բերում է գործարարություն, նորարարություն, ձեռնարկատիրական ոգի, կառավարման նոր սկզբունքներ, նշանավորում նոր ավանդների ձևավորում, բայց ոչ պակաս նշանակություն ունեն նաև այն ուժերը, որոնք, ինչպես դեռևս անցյալ դարասկզբին նկատել է Դ. Պիխնոն, «շրջապատում են մարդուն օրորոցից մինչև գերեզման»: Իսկ ինչպես առանձին անհատների, այնպես էլ ամբողջ ժողովրդի տնտեսական գործունեության վրա մշտապես ազդող ուժեր են «բարքերն ու սովորությունները, բարոյականությունը, կրթվածությունը, էներգիան, ձեռներեցության ոգին, օրենսդրությունը, պետական և հասարակական կարգը»:[4]

- Շոլոխովի «Հերկած խոպանի» հերոսներից մեկին՝ Պուտիլովյան գործարանի փականագործին, որը կյանքում երբեք վար ու ցանք չի արել, ուղարկում են գյուղացուն սովորեցնելու, թե ինչպես պետք է հողը հերկել:
- Ռուս հայտնի գրող Անատոլի Զլոբինը սոցիալիստական պլանային տնտեսության բարոյական համակարգը բնութագրում է այսպիսի մի պատկերավոր պատմությամբ. մի թագավորությունում, մի երկրում արտադրում էին բեռնատար մեքենաներ՝ կարտոֆիլ և հրթիռներ տեղափոխելու համար: Դրանք հրթիռների համար հերիքում էր, իսկ կարտոֆիլի համար՝ ոչ: Զեկուցում են նախարարին: Նա գալիս է գործարան՝ թե տվեք մեզ պլանից ավել 100 բեռնատար մեքենա, փոխարենը մենք ձեզ կբերենք կարտոֆիլ: Գործարանում թե՝ մեզ տվեք 100 լրացուցիչ զսպակներ՝ և մենք կտանք 100 լրացուցիչ մեքենա: Նախարարը դիմում է մեքենաշինարարներին, թե մեզ պլանից ավելի զսպակներ են պետք, որպեսզի մեքենաներ արտադրեն կարտոֆիլ տեղափոխելու համար: Վերջիններս, թե կարող ենք տալ անհրաժեշտ զսպակները, բայց դրա համար մեզ անհրաժեշտ է լրացուցիչ գլանվածք: Նախարարը շտապում է գլանվածք արտադրողների մոտ, թե անհրաժեշտ է այսքան գերպլանային գլանվածք, որպեսզի զսպակներ պատրաստեն, մեքենաներ արտադրեն և կարտոֆիլը տեղափոխեն: Սրանք, թե այդքան լրացուցիչ գլանվածքի համար պահանջվում է այսքան լրացուցիչ մետաղ, որի համար դիմում է մետաղագործներին... իսկ այնուհետև լեռնագործներին, թե այսքան լրացուցիչ հանքաքար է անհրաժեշտ որպեսզի...: Սրանք, թե ամեն ինչ կանենք, միայն թե հանքաքարը տեղափոխելու համար տրանսպորտային միջոցները չեն բավականացնում, մեզ անհրաժեշտ են լրացուցիչ 100 բեռնատար մեքենաներ: Նախարարը շտապում է մեքենաշինական գործարան...: Եվ այդպես շղթան նորից է սկսվում:

Սակայն գոյություն ուներ պլանային համակարգին բնորոշ մի մեծ հայտնագործություն՝ պլանների ճշգրտման պրակտիկան: Տարեվերջին բեռնատար մեքենաների արտադրության պլանը 100-ից իջեցվում է 90-ի, և պլանները գերակատարվում են:[5] Ֆ.Բուրլացկին Խորհրդային երկրի ղեկավարի Լ. Բրեժնևի քաղաքական դիմանկարի ուրվագծում բերում է այսպիսի մի փաստ. թե ինչպես մի անգամ, երբ Բրեժնևի մերձավորներից մեկը նրան ասում է, որ ցածր աշխատավարձ ստացողների համար ապրելը դժվարացել է, նա պատասխանել է, թե «Դու չգիտես կյանքը: Ոչ ոք աշխատավարձով չի ապրում: Հիշում եմ երիտասարդական տարիներին՝

---

[1] Մշակ, 1879, N177:
[2] Вопросы философии, 1996, N8, с.68.
[3] Մշակ, 1879, N179
[4] Вопросы экономики, 1998, N9, с.151.
[5] Новый мир, 1987, N3, с.218 – 219.

տեխնիկումում սովորելու ժամանակ, կողմնակի փող էինք աշխատում՝ վագոններ բեռնաթափելով: Եվ դա անում էինք. երեք պարկը կամ արկղը այնտեղ, մեկն իր համար սկզբունքով: Այդպես էլ բոլորն ապրում են երկրում»:[1]

Կարելի է ժամանակի տնտեսական նորմերի վերաբերյալ վկայակոչումներ շատ կատարել, որոնք տասնամյակների ընթացքում ձևավորել են մարդկանց որոշակի պահվածք, հոգեբանություն, ավանդներ ու սովորություններ, ինչը հեշտությամբ փոխել հնարավոր չէ: Ոչ պատահականորեն, XX դարի առանձնահատկություններից մեկը տեսնում են նրանում, որ եթե շատ դյուրին է սպառման եղանակի ընդօրինակումը, ապա շատ դժվար, գրեթե անհնար է արտադրության եղանակի ընդօրինակումը: Արժեր, որ ռեֆորմ իրականացնողները իմանային, որ տնտեսագիտությանը անհրաժեշտ է նայել որպես «տնտեսական կյանքի էթիկա»:

* * *

1990-ին ռուսերենից թարգմանաբար հայերեն լեզվով լույս է տեսնում քաղաքատնտեսության վերջին դասագիրքը: Իր բովանդակությամբ այն վերարտադրում էր նախորդ տարիներին հրատարակված դասագրքերը՝ կառուցված մարքսիստական բանաձևումների վրա: Սակայն տեսության և իրականության խզվածությունն այնքան մեծ էր, որ այդ դասագիրքն արդեն անելիք չուներ: Տնտեսագետների մի մասը շարունակում էր հավատալ Կ. Մարքսի «Կապիտալի» անգերազանցելիությանը, իսկ մի այլ մասի համար առաջացել էր տեսական դատարկություն: Այնուամենայնիվ, 1990-ական թվականներին սկսվում է արևմտյան տնտեսագիտական մտքի հետ հաղորդակցության մի աննախադեպ շրջան ինչպես ռուսերեն լեզվով թարգմանական, այնպես էլ անմիջապես բնագրային գրականության միջոցով: Դրանք, գերազանցապես, համապատասխանում էին նեոդասական դպրոցի ավանդներին, որոնք կենսունակ էին դիտվում ռեֆորմների իրականացման համար: Ու, չնայած վերջին տարիներին նեոդասական տեսության վերաբերյալ քննադատական հրապարակումներին, այնուամենայնիվ, ինչպես մի անգամ նկատել է Մարկ Տվենը ինքն իր մասին, նեոդասական պարադիգմայի վախճանի մասին լուրերը չափազանցված են: Ջեֆրի Հոջսոնը «Տնտեսագիտության տեսությունը և ինստիտուտները, ժամանակակից ինստիտուցիոնալ տնտեսագիտական տեսության մանիֆեստը» աշխատության մեջ, անդրադառնալով տնտեսագիտության ժամանակակից կացությանը ու նշելով ռացիոնալության մաքսիմալացման ու հավասարակշռվածության վերաբերյալ կոնցեպցիաներում տեղ գտած ճեղքվածքներին, գրում է, թե «նկատելի է դառնում տնտեսական կյանքում ինստիտուտների կոնցեպտուալ նշանակության և գործնական հրատապության աճող ընդունելությունը, թեև նրա արդյունքները տնտեսական քաղաքականության հասկացություններում տարբեր են ձևակերպվում: Այնուամենայնիվ, ավելի պարզ է դառնում, որ տնտեսական կոորդինացիան չի կարելի բացառապես կապել շուկայից եկող տնային ազդանշանների հետ. դրան միշտ օժանդակում է այլ սոցիալական և տնտեսական ինստիտուտների լայն սպեկտր: Այս վերջիններս, հակառակ որոշ հնաոճ նեոդասականների բողոքների, կազմում են տնտեսագիտական հետազոտությունների կարևոր օբյեկտ»:[2] Հայտնի է սեփականության հաստատության դերը տնտեսական համակարգում: Հասարակության պատմական էվոլյուցիայի հետ սեփականության հարաբերությունները ընդունել են տարբեր ձևեր, պայմանավորելով տնտեսական կյանքի երևույթները, հասարակական կառուցվածքը, պետական հաստատությունները, սոցիալական ու կուլտուրական կյանքը: Պատահական չէ, որ ինչպես հին, այնպես էլ նոր ինստիտուցիոնալիստները հարցի քննությանը հատկացնում են առանձնահատուկ ուշադրություն: Սեփականությունն ինքնին դեռևս քիչ բան է ասում: Կարևոր նշանակություն են ստանում նրա իրացման պայմանները: Գրականության մեջ հաճախ նշվում են որոշակի ապրանքներ և ծառայություններ կամ ինչպես անվանում են պետական կամ հասարակական բարիքներ, որոնք շուկայական համակարգը բավարար քանակությամբ արտադրել չի կարող: Հաշվի առնելով, որ այդպիսի ապրանքների և ծառայությունների վրա հնարավոր չէ ոչ գին սահմանել, ոչ էլ դրանք վաճառել, ակնհայտ է, որ մասնավոր ֆիրմաները ոչ մի շահ չունեն մի ծառայությունից, որն օգուտ է բերում, բայց որի արտադրության համար շուկան ռեսուրսներ չի հատկացնում, ուստի դրանց արտադրությունն իրականացնում է պետությունը: Հետևապես, այդ բնագավառում պետական մոնոպոլիան դառնում է անխուսափելի, իսկ մասնավոր սեփականության առկայությունն՝ անհնար:

Սխալը, որին տուրք են տալիս տնտեսագետները, Քոուզի կարծիքով, պարզապես դարձել է նախապաշարմունք:

Այսպես, իբրև դասական օրինակ բազմաթիվ տնտեսագետներ (Ջոն Ստյուարտ Միլ, Գենրի Սեջվիկ, Ա. Պիգու, Պ. Սամուելսոն) վկայակոչում են ծովափնյա փարոսը, որի լույսից օգտվում են նավերը: Մինչդեռ փարոսների բրիտանական ծառայության պատմությունը վկայում է հակառակ օրինաչափության մասին: Տնտեսագետներից և ոչ մեկը չի կատարել փարոսների ֆինանսավորման և կառավարման համակարգերի վերլուծություն: Դա պատկերավոր բացատրության օրինակ է, երևույթին «գեղարվեստական համոզչություն» տալու համար, որը սակայն չի համապատասխանում իրականությանը: Այդ ծառայության «վաղ շրջանների պատմությունը ցույց է տալիս, որ հակառակ շատ տնտեսագետների համոզմունքների, լուսատուների ծառայությունները կարող են ապահովվել մասնավոր ձեռնարկատերերի կողմից: Այդ ժամանակներում առևտրականները և նավատերերը կարող էին Տերությունից թույլտվություն խնդրել առանձին մարդու համար կառուցելու փարոս և նավերից տուրք գանձելու համար...: Մասնավոր սեփականատերերը կառուցում, կառավարում, պահպանում և տնօրինում էին լուսատուների, կարող էին վաճառել կամ ժառանգություն կտակել: Կառավարության դերը սահմանափակված էր փարոսների նկատմամբ սեփականության իրավունքի ստեղծումով և այդ իրավունքների պահպանությամբ: Տուրքերը նավահանգիստներում հավաքում էին փարոսների սեփականատերերի գործակալները: Տուրք վճարելու հարկադրանքի պրոբլեմը նրանց համար ճիշտ այնպիսին էր, ինչպիսին նավատիրոջը ցանկացած ապրանքներ և ծառայություններ մատակարարողինը: Սեփականության իրավունք-

---

[1] Литературная газета, 14 сентября 1988г, N 37.

[2] Джеффри Ходжсон, Экономическая теория и институты. Манифест современной институциональной экономической теории, М., 2003, с.31

ները անսովոր էին միայն նրանով, որ նրանցում, որպես պայմանի, վերապահվում էր գինը՝ տուրքի մեծությունը»:[1] Տասնամյակներ առաջ տիրապետող էր այն տեսակետը, թե «ռադիոհաղորդումների» շուկան կարող է լինել միայն պետական մոնոպոլիայի կարգավիճակում, առանց որի եթերում կսկսի իշխել քաոսը: Մրցակցող կողմերը կսկսեն խանգարել միմյանց: Քոուզը, ընդհակառակը, գտնում էր, որ, եթե տարբեր հաճախականության ալիքները դառնան մասնավոր սեփականություն, ապա կծագի արդյունավետ շուկա, և պետական վերահսկողության անհրաժեշտությունը կդառնա ավելորդ:

Ժամանակ առաջ, տնտեսագետների գերակշիռ մասը հետևում էր Ա. Պիգուի այն տեսակետին, ըստ որի, եթե ձեռնարկության սեփականատերը, որի ծուխը վնաս է պատճառում հարևաններին, պետք է փոխհատուցի վնասը: Հանգույցի լուծման այսպիսի հարցադրումը անընդունելի է Քոուզի համար, քանի որ այն մթագնում է ընտրության հնարավորությունը: Նա բերում է հրուշակագործի օրինակը, որն իր մեքենաների աղմուկով և տատանումներով խանգարում է բժշկի աշխատանքը: Ըստ ավանդական մտածողության, պատճառած վնասից բժշկին ազատելու համար, անհրաժեշտ է վնասը դնել հրուշակագործի վրա: Պրոբլեմը հանգեցվում է այն բանին, թե արժե՞ արդյոք, հրուշակեղենի արտադրության մեթոդները սահմանափակելով, ապահովել բժշկական ծառայությունների մեծ քանակը՝ հրուշակեղենի մատակարարումների կրճատման հաշվին: Բոլոր այսպիսի դեպքերում խոսք պետք է գնա ամբողջական վնասը նվազագույնի հասցնելու մասին: Եթե սեփականության իրավունքները հստակեցված են, ապա շուկայական համակարգը՝ ինքը, կարող է վերացնել արտաքին էֆեկտները, և սուբյեկտները կարող են հասնել լուծելի տարբերակի, յուրաքանչյուրին ապահովելով սեփական շահերը՝ չխախտելով մյուսինը:

Սեփականության իրավունքների տնտեսագիտական տեսության մշակման մեջ հատկապես նշանակալից են Ա. Ալչիյանի և Գ. Դեմսեցի կատարած ներդրումները, որոնք կարևորում են «իրավունքների օրինականացված կառուցվածքը»:[2] Հասարակության տեսանկյունից սեփականության իրավունքները հանդես են գալիս որպես «խաղի կանոններ», որոնք կարգավորում են առանձին գործակալների միջև հարաբերությունները: Անհատական գործակալների տեսանկյունից դրանք ներկայացնում են այս կամ այն ռեսուրսի վերաբերյալ որոշումներ կայացնելու «իրավասությունների փնջեր», որոնք կարող են տրոհվել տարբեր մարդկանց միջև:

Հարցի վերաբերյալ բերված տեսությունը կարևոր եմ դիտում ցույց տալու, որ տնտեսական փոխաձևության ժամանակ լոկ սեփականաշնորհման ակտը, թերևս, անհամեմատ հեշտ էր, քան սեփականության արդյունավետության նախապայմանների «անհրաժեշտ նորմերի հաստատումը»: Իրավացի է Հ. Աղաջանյանը, երբ նկատում, է թե սեփականաշնորհմամբ կամ մասնավորեցմամբ, այսինքն «մասնավոր սեփականության իրավունքի ձևակերպմամբ խնդիրը չէր կարող լուծվել. անհրաժեշտ էր իրականացնել բարեփոխումներ իրացման պայմանների կամ ինստիտուցիոնալ սկզբունքների դաշտում՝ բազմաթիվ գործոնների ազդեցության համադրությամբ, որոնք ներառում են իրավական, հոգեբանական, քաղաքական և ավանդույթային առանձնահատկությունների ամբողջությունը»: «Որքան բարդ է որևէ տնտեսաձևի կամ սեփականության ձևի հաստատումը, այնքան էլ դժվար է դրանից հրաժարումը»:[3] Ահա թե ինչու շատ կարճ ժամանակամիջոցում հանրապետությունում ձևավորվեց սեփականատերերի ստվար զանգված, բայց «չձևավորվեց արդյունավետ սեփականատիրոջ ինստիտուտը»:[4]

Տնտեսական զարգացման որակական անցումների համար պահանջվում են պատմական ավելի մեծ ժամանակաշրջաններ: Գոյություն ունեն ազգային պահվածքի որոշակի նորմեր, որոնք անտեսանելի ձևով տասնամյակներ ու հարյուրամյակներ փոխանցվում են սերնդեսերունդ: Հայտնի է, թե ինչպես դեռևս մեկ դար առաջ ռուսական հայտնի ռեֆորմատորներն ու տնտեսագիտական մտքի նշանավոր ներկայացուցիչները փորձում էին ռուսական գյուղացիությանն ուղղել դեպի մասնավոր սեփականատիրական ուղին: Սակայն այսօր էլ ռուսական միտքը հաճախ կասկածանք է հայտնում կատարվող վերափոխությունների վերաբերյալ, որ չնայած շուկայական հարաբերություններին բնորոշ հաստատությունների առկայությանը, Ռուսաստանում «կապիտալիզմ չկա և երբեք չի լինելու»: Եվ դա այն պատճառով, որ «բացի կապիտալի իշխանությունից և չարչիական ոգու «էմանացիայից» (Վերներ Զոմբարտ) կապիտալիզմի զարգացման համար անհրաժեշտ է ևս մի գործոն՝ մարդու որոշակի տիպը: Արևմտաեվրոպական մարդուն՝ անհատապաշտին, լիբերալին և շուկայաբանին:

Ռուս տնտեսագիտական միտքը տնտեսական գործունեությունը երբեք չի հանգեցրել միայն փողին, շահույթի և վնասի հաշվարկելուն, ֆինանսական արդյունքները չի առանձնացրել հոգևոր բարոյական արժեքներից, միշտ իր առջև ունենալով բարձր իդեալ:

Մեր բնորոշմամբ, տնտեսագիտությունը գիտություն է ոչ թե այն մասին, թե ինչ արժե մեկ խորանարդ մետր բետոնը և ինչպես իջեցնել նրա ինքնարժեքը, և ոչ էլ այն մասին, թե ինչպես ավելացնել ժամանակակից Դերունովի, Կոլուպաևի, Ռազուվաևի մասնավոր ձեռնարկության շահույթը: Տնտեսագիտությունը գիտություն է այն մասին, թե մենք ինչպես վարենք տնտեսությունը, որպեսզի պետությունը հարստանա, հողը բերրիանա, իսկ մարդիկ դառնան ավելի մաքուր, ավելի մարդկային, ավելի վեհանձն ու ապրեն երկար և ուրախ: Մեր նպատակը ոչ թե սպառողական հասարակարգն է, այլ ավելի արժանավոր՝ հոգևոր հարուստ կյանքը ռուսաստանյան քաղաքացիների համար: Ուստի մեր տնտեսության համար բնորոշը պետք է դառնա ոչ թե «փող-ապրանք-ավելի շատ փող» ցիկլը, այլ բոլորովին ուրիշ կարգի ցիկլ՝ «մարդ - արտադրություն -ավելի կատարյալ մարդ»: Հենց հողի նկատմամբ մասնավոր սեփականության բացակայությունն է ծնել ռուս ժողովրդի ամբողջ աշխարհայացքը, նրա աշխարհատեսանելիության տիեզերականությունը: Մեզ հեշտ է ոգեշնչել նույնիսկ անձնական և մարդուն չվերաբերող որևէ հասարակական նշանակության գործի, մինչդեռ այլ երկրներում որպես բեռ

---

[1] Коуз Р., Фирма, рынок и право, М., 1993.

[2] Տես՝ Вехи экономической мысли, СПб., 2000,т.3, с.426.

[3] Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, 2004, N1, էջ 83:

[4] Գ. Զ. Աբաբեկյան, «Անցումային տնտեսության ինստիտուցիոնալ համակարգը և նրա կատարելագործման հիմնախնդիրները» (թեկնածուական ատենախոսության սեղմագիր) Ե., 2004, էջ16:

ոտքերից կախված է սեփականությունը:[1] Ասել է, թե ռուսական գիտակցությունը չի կարող մասնավոր մարդու գաղափարը բարձր դասել մարդկային հանրությունից: Անհրաժեշտություն չեմ տեսնում անդրադառնալու հեղինակի արծարծումների տեսական ակունքներին, դրանք համադրել ռուսական իրականության այսօրվա կացությանը կամ էլ գուշակություններ անել նրա ապագա միտումների մասին, բայց մի հարցում կարելի է համաձայնել Մ. Անտոնովի հետ, որ ինստիտուտները հեռավոր թելերով կապված են անցյալի հետ, և, ինչպես նկատում է Հ. Աղաջանյանը՝ հաճախ «թաքնված են մարդկային կեցության անիմանալի շերտերի մեջ, որի հիմքը հոգևոր-մշակութային, բարոյական և ավանդական արժեչափերն են»: «Ինստիտուտը նաև հասարակական համաձայնության անհրաժեշտ միջավայրի ձևավորման նպատակով ստեղծված վարքագծի կանոններն են», իսկ վերջիններիս վրա ազդող գործոններն են տվյալ հավաքականության պատմական զարգացման առանձնահատկությունները, քաղաքակրթական մակարդակը, ավանդույթն ու հավատքը:[2] Մասնագետները հենց այդ շերտերում են փնտրում այսօրվա Ռուսաստանի փոխակերպության ճանապարհին տեղ գտած դժվարությունները: Մինչ հարգանքը օրենքի նկատմամբ, Եվրոպան համարում էր քաղաքացիական հասարակության կարևոր պայմանը, ապա ռուսական պատմության բնորոշ հատկանիշներից մեկը արհամարհական և նույնիսկ բացասական վերաբերմունքն էր իրավունքի հանդեպ. «Ես չեմ մեղավորը,– գրել է Յու. Օ. Կլյուչևսկին,– որ ռուսական պատմության մեջ քիչ ուշադրություն եմ դարձնում իրավունքի վրա. ինձ դրան սովորեցրել է ռուսական կյանքը՝ չճանաչելով ոչ մի իրավունք»: Եվ իրոք, լրացնում են Տ. Զասլավսկայան և Մ.Շաբանովը, սլավյանոֆիլների աչքերում իրավունքը լոկ «արտաքին ճշմարտություն» էր, որը մարդկային խիղճը փոխարինում էր ոստիկանական հսկողությամբ: Գերցենը՝ իրավունքը չհարգելը դիտում էր ռուս ժողովրդի պատմական առավելությունը, նոր աշխարհ կառուցելու նրա ներքին ազատության ու ունակության վկայությունը, իսկ ռուսական անարխիստները պահանջում էին պետության ոչնչացում, որը ինչպես և իրավունքը բռնության գործոն է[3] և այլն:

Շուկայական ինքնակարգավորման պայմաններում ռացիոնալ պահվածքը կապված է բազմաթիվ խոչընդոտների ու հակասությունների հաղթահարման հետ, ուստի ծագում է պետության գործառույթների արդյունավետ իրականացման համար ինստիտուցիոնալ համակարգի ունեցած նշանակության և այդ ինստիտուտների ձևավորման գործում պետության դերի փոխհարաբերության հարցը, այսինքն պետության և տնտեսության փոխհարաբերությունը:

Կառլ Պոլանին՝ XVIII-XIXդդ. Անգլիայի շուկայական հարաբերությունների զարգացմանը նվիրված աշխատության մեջ, քննադատում է տնտեսագիտության մեջ տեղ գտած այն միթը, թե սեփականության ձևական իրավունքի և ապրանքային փոխանակության ընդլայնումը անխուսափելիորեն պետությանը հեռացնում է հասարակական կյանքից. «Ազատ շուկաների արմատավորումը ոչ միայն չի ազատում պետության վերահսկողության անհրաժեշտությունից, կարգավորումից ու միջամտությունից, այլև ընդհակառակը, բերում է դրանց մասշտաբների հսկայական մեծացմանը: Որպեսզի ապահովվի համակարգի ազատ գործողությունը, կառավարությունը ստիպված է միշտ գտնվել զգաստ վիճակում: Այնպես որ, նույնիսկ նրանք, ովքեր կրքոտ ձևով փափագում են պետությանը թոթափել ավելորդ ֆունկցիաներից, որոնց համար պետության գործունեության սահմանափակումը աշխարհայացքային դիրքորոշում է, ստիպված են laisser – faire-ի հաստատման համար այդ նույն պետությանն օժտել անհրաժեշտ նոր լիազորություններով, կազմակերպություններով և այլ միջոցներով»:[4]Շառլ-Մորիս Թալեյրանը, երբ դառնում է Ֆրանսիայի դիվանագիտության ղեկավարը, հավաքում է իրեն ենթակա աստիճանավորներին՝ ասելով «պակաս եռանդունություն պարոններ, պակաս եռանդունություն»: Մեծ ռեֆորմները պահանջում են նաև մեծ զգուշավորություն: Ինչը և ժամանակի և բովանդակության առումներով բացակայում էր սեփականաշնորհման գործընթացներում, որն իր մեջ թաքցնում էր պահվածքի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են՝ անտնտեսվարությունը, հովանավորչությունը, հարկերի վճարումից խուսափելը, կոռուպցիան, հանցագործությունները, անօրինականությունը, ստվերային տնտեսությունը, կառավարության անդամների անկարողությունը կատարելու իրենց պարտականությունները և այլն, և այլն: Իսկ ամեն մի պետություն կոչված է այնպիսի հասարակական միջավայրի ինստիտուցիոնալ պայմանների ստեղծմանը, որը կզսպի այդ երևույթները, որոնք, թվում է, ոչ պակաս չափով են պայմանավորում այն, ինչը անվանվում է տնտեսական ու սոցիալական հավասարակշռություն:

ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
ԱԺ պատգամավոր, ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր
Ա. ՄԵԼՔԻԿՅԱՆ

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներդրումային գործընթացների արդյունավետության բարձրացման վրա մեծապես ազդում է հանրապետությունում ձևավորված ընդհանուր տնտեսական իրավիճակը: Տնտեսական համակարգում դեռևս գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնք էականորեն խոչընդոտում են վերջինիս բնականոն

[1] "Литературная газета", 25 - 31 января 2006г., N2 - 3.
[2] Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, 2004, N1, էջ 85 - 87:
[3] Տես՝ Истоки. экономика в контексте истории и культуры, М., 2004, с.212.
[4] Տես՝ Джеффри Ходжсон, նշվ. աշխ., էջ 228: